Ո՛վ Հայաստան հարս մեծարգՈ
Ո՞ւր է շքեղ սուրբ փեսայն քՈ
Ուղի անդարձ գնաց ոչ գՈ
Ողբայ եւ լաց զայրութիւն քՈ։
Չըւեաց ի մէնջ մեզ ուսուցիՉ
Չունիմք զայլ ոք գիրս թարգմանիՉ
Չըկա՛ խըրթին տառից մեկնիՉ
Չը մնաց հանգոյն նորա վիպիՉ։
Պարթեւազնոց տուն հոյակաՊ
Պարիսպն անկաւ եղաւ տագնաՊ
Պարծեալ լեզուքս եղեն ի կաՊ
Պատեաց ըզմեզ խաւար եւ տաՊ։
Ջանըն ճիշաւ յեկեղեցւոՋ,
Ջահունակ իւր բարձաւ տեղւոՋ,
Ջուր ցամաքեաց տեառըն այգւոՋ,
Ջարդեալ հատաւ բարի բողբոՋ։
Ռաբբոյն մեր կեանքն զվնառն էաՌ,
Ռամից խաւար եղեւ իսպաՌ,
Ռեհըն մահու ըզնա էաՌ
Ռամուտս լացից մեծաբարբաՌ։
Սուգ առ երկիր օգնեա հիգոյՍ
Սայպէս արեւ ամփոփեա զլոյՍ
Սըփռեցաւ մեզ վերա հոգւոյՍ
Սեւաթորեալ խաւար անլոյՍ։
Վարպետաց վարժիչ սիրոՎ
Վերափոխեալ առ տէր հոգւոՎ
Վընիտ մարմնոյն պատեալ հողոՎ
Վայ զըրկելոյս հազար լեզւոՎ։